ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

<<ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

Ք. Երևան <<13>>.02.2026թ.
ժամը 16:55

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

ՀՀ ՆԳՆ ՏՏ և ԿՎ պետի պարտականությունները կատարող **Ա. Թամազյան (հանձնաժողովի նախագահ),**

ՀՀ ՆԳՆ ՏՏ և ԿՎ պետի տեղակալ **Ռ. Մկրտչյան (գնահատող անդամ),**

ՀՀ ՆԳՆ ՏՏ և ԿՎ համակարգչային ցանցի և տեղեկատվական անվտանգության բաժնի պետ **Ա. Դանիելյան (գնահատող անդամ),**

ՀՀ ՆԳՆ ՏՏ և ԿՎ տեղեկատվական համակարգերի սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ **Շ. Հարությունյան (բացող անդամ),**

ՀՀ ՆԳՆ ՏՏ և ԿՎ համակարգչային ցանցի և տեղեկատվական անվտանգության բաժնի գլխավոր մասնագետ **Գ. Հովասափյան (բացող անդամ):**

ՀՀ ՆԳՆ ՏՎ գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ **Լ. Սահակյան (գնահատող հանձնաժողովի քարտուղար**):

ՀՀ ՆԳՆ կարիքների համար ***ծրագրային ապահովման օժանդակ ծառայությունների*** ձեռքբերման նպատակով հայտարարված **ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16** ծածկագրով ընթացակարգի բացման նիստում արձանագրվեց՝

1. ***Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.***

   Հրավերի վերաբերյալ եղել են հարցումներ և տրվել են պարզաբանումներ:

2. ***Տեղեկություններ գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ***

ՀՀ ՆԳՆ կարիքների համար ծրագրային ապահովման օժանդակ ծառայությունների *ձեռքբերման նպատակով հայտարարված* ***ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16*** *ծածկագրով ընթացակարգի բացման նիստում /**13.02.2026թ. ժամը 16:55**/ արձանագրվեց՝ ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետին /**13.02.2026թ. ժամը 12:00**/ **www.armeps.am** կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրել են **«ՀԵԼԻՔՍ ԿՈՆՍԱԼՏԻՆԳ» ՍՊԸ-ն և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն:***

3. ***Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.***

ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16 *ծածկագրով գնման ընթացակարգին ներքոնշյալ ընկերությունները.*

N	Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը	Հայտ ներկայացրած մասնակից/ներ/ հասցեն, հեռախոսահամարը
1	«ՀԵԼԻՔՍ ԿՈՆՍԱԼՏԻՆԳ» ՍՊԸ	ՀՀ, Երևան, Ադոնցի փ., շ. 4, հ.8, 0014 էլ. փոստ info@helix.am Հեռախոս /374/60-508-287
2	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30 էլ. փոստ khv_84@mail.ru / eychgroup@gmail.com Հեռախոս /091/404073

4. ***Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գները.***

ԳՆԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Չափաբաժնի համար	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ		
			Արժեք	ԱԱՀ	Գին
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	295 740 000	228 450 000	45 690 000	274 140 000
1	«ՀԵԼԻՔՍ ԿՈՆՍԱԼՏԻՆԳ» ՍՊԸ		196 725 000	39 345 000	236 070 000

5. «ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ուսումնասիրման, հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանության մասին.

5.1 «ՀԵԼԻՔՍ ԿՈՆՍԱԼՏԻՆԳ» ՍՊԸ-ի և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է հետևյալը.

5.2 «ՀԵԼԻՔՍ ԿՈՆՍԱԼՏԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից թիվ 1 հավելվածը՝ դիմում հայտարարությունը, թիվ 2 հավելվածը՝ գնային առաջարկը ներկայացվել են «ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: «ՀԵԼԻՔՍ ԿՈՆՍԱԼՏԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը՝ 11.02.2026թ.-ին «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից տրված թիվ O.AB.100.12CIB.PIED.0.4078.26 բանկային երաշխիքը (այսուհետ նաև՝ Երաշխիք) ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես Երաշխիքի 2-րդ կետով չի նշվել ՀՀ ներքին գործերի նախարարության հաշվեհամարը, որով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն պարտավորվում է նույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում վճարել 14 787 000 ՀՀ դրամ երաշխիքի գումարը:

5.3 «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից թիվ 1 հավելվածը՝ դիմում հայտարարությունը, թիվ 2 հավելվածը՝ գնային առաջարկը, ինչպես նաև հայտի ապահովումը՝ կանխիկ փողի ձևով վճարված թիվ 004070 բյուջետային փոխանցման միջոցով, ներկայացվել են «ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Միաժամանակ «ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16» ծածկագրով գնման ընթացակարգի քարտուղարի կողմից ներկայացվեց տեղեկատվություն այն մասին, որ https://clienttreasury.minfin.am/ համակարգի միջոցով ստուգվել և պարզվել է, որ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից կատարված բյուջետային փոխանցումը համապատասխանում է իրականությանը:

Վերոնշյալով պայմանավորված՝ ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ և «ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.2-րդ, 8.3-րդ, 8.4-րդ և 8.6-րդ կետերով, գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող և վերջինիս ճանաչել որպես ընտրված /հաղթող/ մասնակից:

6. «ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման և Գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշման մասին.

6.1 Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով սույն արձանագրության 5.2-րդ կետով արձանագրված անհամապատասխանությունները, ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ և «ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 7.6-րդ և 8.2-րդ կետերով, գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀԵԼԻՔՍ ԿՈՆՍԱԼՏԻՆԳ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

6.2 Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով սույն արձանագրության 5.3-րդ կետը, ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ և «ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.2-րդ, 8.3-րդ, 8.4-րդ և 8.6-րդ կետերով, գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը

գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող և վերջինիս ճանաչել որպես ընտրված /հաղթող/ մասնակից:

6.3 *Գնահատող հանձնաժողովը որոշեց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ սույն հայտարարությունը տեղեկագրում՝ www.gnumner.minfin.am կայքում հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:*

6.4 *«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին կառաջարկվի կնքել ծրագրային ապահովման օժանդակ ծառայությունների գնման պայմանագիր:*

Ընդունվեց որոշում՝ կողմ 5, դեմ 0:

ՆԱԽԱԳԱՀ՝
ՀՀ ՆԳՆ ՏՏ և ԿՎ պետի պարտականությունները կատարող Ա. Թամազյան

ՀԱՅՏԸ ԳՆԱՀԱՏՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝
ՀՀ ՆԳՆ ՏՏ և ԿՎ պետի տեղակալ Ռ. Մկրտչյան
ՀՀ ՆԳՆ ՏՏ և ԿՎ ՀՑ և ՏԱ բաժնի պետ Ա. Դանիելյան

ՀԱՅՏԸ ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝
ՀՀ ՆԳՆ ՏՏ և ԿՎ ՏՀՍ բաժնի գլխավոր մասնագետ Շ. Հարությունյան
ՀՀ ՆԳՆ ՏՏ և ԿՎ ՀՑ և ՏԱ բաժնի գլխավոր մասնագետ Գ. Հովասափյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
ՀՀ ՆԳՆ ՏՎ ԳՀ բաժնի գլխավոր մասնագետ Լ. Սահակյան